Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

Հայաստանի կենսաբ. հանդես, 1 (72), 20120

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լիա Լևոնի Օսիպյանի հոբելյանի առթիվ)

Հայաստանի գիտական հասարակայնությունը նշում է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի պատվավոր վարիչ Լիա Լևոնի Օսիպյանի ծննդյան 90-ամյակը:

Ակադեմիկոս Լ.Լ. Օսիպյանի աշխատանքային ողջ գործունեությունը կապված է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի հետ, որտեղ նա անցել է երկարամյա ճանապարհ՝ լաբորանտից մինչև բուսաբանության ամբիոնի վարիչ և ֆակուլտետի դեկան: Լայն է նրա գիտական հետազոտությունների շրջանակը. այն ընդգրկում է տեսական և կիրառական սնկաբանության, սնկերի կարգաբանության, ֆլորիստիկայի, էկոլոգիայի, ֆիլոգենիայի, կենսացենոլոգիայի և ֆիզիոլոգիական ակտիվության բազմաբնույթ հարցեր: Ակադեմիկոս Լ.Լ. Օսիպյանի ավելի քան վեց տասնամյակ սնկաբանության տարբեր ոլորտներում իրականացրած հետազոտություններն իրական ճանաչում գտան թե՛ Հայաստանում, և թե՛ նրա սահմաններից դուրս՝ ընձեռելով նրան գիտական պատշաճ հեղինակություն և համբավ: Հատկանշական է, որ ակադեմիկոս Լ.Լ. Օսիպյանը, հիմնավորելով միկոֆլորիստական գիտական ուսումնասիրությունների ընդլայնման անհրաժեշտությունը, տարածեց դրանք բնական օբյեկտների և արդյունաբերական արտադրանքի ավելի լայն շրջանակների վրա՝ դառնալով Հայաստանում սնկաբանության ոլորտում նաև կիրառական բնույթի հետազոտությունների ջատագով: Նա հետազոտություններն իրականացրել է սնկաբանության տարբեր ուղղություններով՝ ֆիտոպաթոլոգիական, բժշկական, անասնաբուժական, հետազոտել է ջրային և հողային սնկերը, տարաբնույթ ծագում ունեցող նյութերի սնկերով քայքայման գործընթացները, սննդամթերքի սնկային անվտանգության խնդիրները և այլն: Դեռևս անցյալ դարի 60-70-ականներից ակադեմիկոս Լ.Լ. Օսիպյանի բժշկական սնկաբանության ոլորտում կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սնկաբանի մասնակցությունը հիվանդության ախտորոշմանը նպաստում է համալիր թերապիայի իրականացմանը:

Սնկաբանության ոլորտում կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սնկաբանի մասնակցությունը հիվանդության ախտորոշմանը նպաստում է համալիր թերապիայի իրականացմանը:

Անժխտելի է ակադեմիկոս L.L. Օսիպյանի ավելի քան 40-ամյա գիտական գործունեության նշանակությունը սննդամթերքի և դեղային պատրաստուկների, սննդամթերքի միկոտոքսիկոլոգիայի և սնկաբանական անվտանգության հարցերի պարզաբանման գործում: Այդ աշխատանքների արդյունքում մշակվեցին առաջարկություններ հանրապետության պահածոների գործարաններում կիրառման համար, որոնք այսօր էլ արդիական են: Սննդամթերքի կոնտամինացման վերաբերյալ նրա կողմից իրականացված հետազոտություններն առ այսօր չունեն իրենց նմանօրինակները: Այդ աշխատանքները թույլ են տալիս բացահայտել աղտոտողների տեսակային բազմազանությունը, արտադրության գործընթացում դրանց կենսաբանական հատկությունների փոփոխությունը՝ տոքսիգենությունը, ջերմակայունությունը, ագրեսիվությունը և այլն: Հատկանշական է, որ նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ակադեմիկոս L.L. Օսիպյանի կողմից ղեկավարվող սնկաբանության լաբորատորիայում առաջարկվեցին սննդամթերքում բորբոսասնկերի տոքսիկության որոշման համար Հայաստանի Պետական ստանդարտներ: Լինելով գիտության նվիրյալ և հայրենասեր քաղաքացի նա Հայաստանում առաջիններից էր, ով ահազանգեց մարդու և բնության համար գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների և սննդամթերքի հնարավոր վտանգների մասին:

Ակադեմիկոս L.L. Օսիպյանը ոչ միայն հայտնի, առաջադեմ գիտնական է, գիտության հմուտ կազմակերպիչ, այլև շնորհալի մանկավարժ: Նա մեծ ավանդ ունի ժամանակակից կենսաբանների, հատկապես պատշաճ գիտելիքներով օժտված սնկաբանների պատրաստման գործում, Հայաստանում սնկաբանական դպրոցի բարեհաջող զարգացման գործում: Շուրջ 35 տարի լինելով ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ նա ցուցաբերել է ղեկավարին բնորոշ խստապահանջություն, սկզբունքայնություն, կազմակերպչական ձիրք և ունակություններ:

Ակադեմիկոս L.L Օսիպյանն ավելի քան 400 տպագրված գիտական աշխատանքների, այդ թվում և 8 մենագրության հեղինակ է: Նա եղել է սպորավոր բույսերին և սննդամթերքի աղտոտման և անվտանգության հարցերին նվիրված բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպիչ և մասնակից: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մոտ քսան դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ:

Հոբելյարը ծավալել է նաև ակտիվ հասարակական գործունեություն: Նա Հայաստանի և Ռուսաստանի բուսաբանական ընկերությունների անդամ է, մեծաթիվ գիտական խորհուրդների, գիտական ամսագրերի խմբագրական կոլեգիաների անդամ: Երկար տարիներ լինելով Հայաստանի սպառողների միության փոխնախագահ նա ակտիվ գործունեություն է ծավալում սպառողների իրավունքների և սննդամթեր-քի անվտանգության պաշտպանության հարցերում: Միաժամանակ նա Հայաստանի անտառների և կանաչ տարածքների պահպանման և վերականգնման մեծ ջատագովն է:

Ջերմորեն շնորհավորելով միջազգային հեղինակություն վայելող մեր ավագ գործընկերոջը՝ ակադեմիկոս L.L.Օսիպյանին, մաղթում ենք նրան քաջառողջություն և ամենայն բարիք:

Է.Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԵՊՀ կենսաբանության
ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

Ս.Գ.ՆԱՆԱԳՅՈՒԼՅԱՆ
ԵՊՀ բուսաբանության և սնկաբանության
ամբիոնի վարիչ, պրոֆեսոր